126

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1506

02.03.2015թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Հիմք ընդունելով Դիտորդական խմբի 01.03.2015թ-ին հրավիրված արտահերթ նիստի որոշումը, խնդրում ենք տալ մեկնաբանություն Դիտորդական խմբի 2014թ-ի տարեկան հաշվետվության մեջ տեղ գտած փաստերին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ներկայացրած հաշվետվության երկրորդ օրինակը ներկայացվել է ՀՀ քննչական կոմիտեին, որպեսզի տրվի մեկնաբանություն քննչական կոմիտեին վերաբերվող հարցերին:

Կից ներկայացնում ենք՝

1. Դիտորդական խմբի 2014 թ-ի տարեկան հաշվետվությունը / 45 էջ/

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
926
03 03 2015 թ.

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝

1288
03 03 15 թ.

Հ.Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60
Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-1198 <<17>> 04 2014թ.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ տիկին Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

ՀՀ ոստիկանությունում քննարկվել է ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերի հասարակական դիտորդների խմբի գործունեության 2014թ. տարեկան հաշվետվությունը, որի կապակցությամբ Ձեզ են ներկայացվում ՀՀ ոստիկանության մեկնաբանությունները՝ հաշվետվության կառուցվածքին համապատասխան հաջորդականությամբ:

Միաժամանակ հայտնվում է, որ հաշվետվությունում արծարծված մի շարք հարցերի վերաբերյալ մեկնաբանություններ չեն ներկայացվում, քանի որ 2014թ. ընթացիկ մեկնաբանություններով դրանց արդեն իսկ տրվել են հիմնավոր և սպառիչ պատասխաններ, իսկ առանձին դրույթներ մեկնաբանվել են մեկ-երկու օրինակների տեսքով:

Առդիր <<10>> թերթ

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի գործունեության 2014թ. ամփոփիչ հաշվետվության վերաբերյալ

Ներածություն

Համաձայն <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ ձերբակալված անձին արգելանքի կամ կալանավորված անձին կալանքի տակ պահելն իրականացվում է օրինականության, ձերբակալված կամ կալանավորված անձանց՝ օրենքի առաջ հավասարության, մարդասիրության, անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու սկզբունքների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքին և Քրեական դատավարության օրենսգրքին, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

2001թ. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին Եվրոպական կոնվենցիան, որի նպատակն է ստեղծել անկախ միջազգային և ազգային մարմինների ազատազրկման վայրեր կանոնավոր այցելությունների համակարգ՝ խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու համար:

Նկատի ունենալով, որ քաղաքացիների, ձերբակալված կամ կալանավորված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի ցանկացած դրսևորում հակասում է մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերին, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված քաղաքացիների իրավունքներին, ինչպես նաև հիշյալ արատավոր երևույթն ստվեր է գցում ոստիկանության կողմից որդեգրած բաց ու թափանցիկ գործունեության վրա, ինչպես նաև հաշվի առնելով Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (այսուհետ ԽԿԿ) իրավական չափանիշների պահպանման կարևորությունը՝ ոստիկանության հանդեպ հասարակության վստահությունն ամրապնդելու նպատակով, ՀՀ ոստիկանության պետի կողմից խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի իրավական չափանիշների կիրառումն ապահովելու նպատակով, ՀՀ ոստիկանության համակարգի բոլոր ստորաբաժանումներին հանձնարարվել է.

- ապահովել ոստիկանության ծառայողների կողմից ԽԿԿ չափանիշներին համապատասխան վարքագծի դրսևորումն անձանց բերման ենթարկելիս, ձերբակալելիս կամ իրենց իրավասության սահմաններում նրանց նկատմամբ որևէ այլ գործողություն իրականացնելիս,
- ապահովել վատ վերաբերմունքի դեպքերի, ինչպես նաև այդպիսի վերաբերմունքի վերաբերյալ բողոքների պատշաճ գրանցումը՝ ԽԿԿ չափանիշներին համապատասխան,
- ԽԿԿ չափանիշները խախտելու ցանկացած դեպք ի հայտ գալու կամ առերևույթ նմանատիպ բողոքի առկայության դեպքում, այդ մասին զեկուցել ՀՀ ոստիկանության ղեկավարությանը, իսկ համապատասխան նյութերը բողոքի հետ միասին օրենքով սահմանված կարգով անմիջապես ուղարկել ՀՀ հատուկ քննչական ծառայություն,
- ապահովել ոստիկանության բոլոր ծառայողների պարբերական իրազեկումն իրենց գործունեության ընթացքում վատ վերաբերմունքի անթույլատրելիության և դրա ցանկացած դրսևորման համար անխուսափելի պատասխանատվության մասին:

1. Գլուխ

Ոստիկանության համակարգի գործող ՁՊՎ-ներում և ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում ու մարմիններում հասարակական դիտորդների խմբերի համագործակցությունը և համագործակցության արդյունքում ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքների ու ազատությունների խախտման դեպքերի բացահայտումն անհրաժեշտ է և ողջունելի, սակայն հարկ է նշել, որ անձի նկատմամբ

ոստիկանության բաժնում կամ բաժնի ՁՊՎ-ում խոշտանգման, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վատ վերաբերմունք չի ցուցաբերվում: Ավելին, ոստիկանության ծառայողների կողմից ձերբակալվածների նկատմամբ կոպիտ, անհարգալից վերաբերմունք դրսևորելու, առավել ևս՝ խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ցանկացած դեպքի առթիվ ՀՀ ոստիկանությունում կատարվում է ծառայողական քննություն և նյութերն ուղարկվում են ՀՀ հատուկ քննչական ծառայություն, մեղավոր պաշտոնատար անձինք ենթարկվում են խիստ կարգապահական պատասխանատվության, այդ թվում՝ քրեական:

Հարկ եղած դեպքում նրանք իրենց իրավունքները պաշտպանելու համար բարձրաձայնում են ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր դիմումներով, որոնց օրենքով սահմանված կարգով ընթացք է տրվում, հետևաբար նրանք չեն կարող գտնվել վախի ազդեցության տակ և լինել կաշկանդված:

Ի դեպ, ՁՊՎ-ներում և ՔԿՀ-ներում նույն անձի մոտ մարմնական վնասվածքների վերաբերյալ կատարված արձանագրությունների անհամապատասխանության վերաբերյալ ոստիկանությունը ոչ բոլոր դեպքերով կարող է տալ մեկնաբանություններ, քանի որ նշված գործընթացը կատարվում է նշված հիմնարկների կամ հրավիրված բուժաշխատողների կողմից և այն հավանաբար կապված է բուժաշխատողների մասնագիտական պատրաստվածության մակարդակից:

Մարմնական վնասվածքների անհամապատասխանությունների վերաբերյալ ներկայացվում են օրինակներ երկու անձանց վերաբերյալ, այսպես.

1. Էրիկ Կարենի Հարությունյանը ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ է ընդունվել 11.04.2014թ. ժամը 07.10-ին: ՁՊՎ ընդունվելու ժամանակ վերջինիս մոտ հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ՝ <<աջ ոտքի սրունքին կա քերծվածք, կզակին կա քերծվածք>>, որոնք սահմանված կարգով գրանցվել են <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում:

Է.Հարությունյանը խցում 11.04.2014թ. ժամը 10.05-ին և 12.04.2014թ. ժամը 13.00-ին համապատասխանաբար ծխախոտի զտիչով և տաբատի շղթայի ամրանով վնասել է ձախ նախաբազուկը: Նրան ՁՊՎ բուժակի և հրավիրված շտապ բուժօգնության անձնակազմի կողմից ցուցաբերվել է առաջին անհրաժեշտության բուժօգնություն: Է.Հարությունյանի ինքնավնասման հետևանքով ստացած մարմնական վնասվածքների և նրան ցուցաբերված բուժօգնությունների վերաբերյալ <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում կատարվել են համապատասխան գրառումներ և երեք դեպքով էլ իրազեկումներ են տրվել վարույթն իրականացնող մարմնին:

Ինչ վերաբերվում է ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ-ում Է.Հարությունյանի մոտ մարմնական վնասվածքներ՝ ձախ աչքի շրջանի ստորին կոպի և այտոսկրի շրջանում այտուցներն հայտնաբերելուն, ապա հայտնվում է, որ վարույթն իրականացնող մարմնի՝ ՔԳՎ Էրեբունու քննչական բաժնի կողմից նյութերի նախապատրաստման ընթացքում Է.Հարությունյանը բացատրություն է տվել, որ իր ձախ աչքի շրջանում վնասվածքները ստացել է ՁՊՎ-ում ագրեսիվ վարք դրսևորելու ընթացքում մահճակալի երկաթյա մասին հարվածելու հետևանքով, նշել է նաև, որ ինչպես բերման ենթարկվելիս, այնպես էլ ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում, ոստիկանության ծառայողները իրեն ֆիզիկական ցավ կամ մարմնական վնասվածքներ չեն պատճառել:

Նշված վնասվածքները այտուցվածության տեսքով ի հայտ են եկել քննչական մեկուսարանում, ինչի պատճառով ՁՊՎ-ում <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում համապատասխան գրառումներ չեն կատարվել:

2. Աշոտ Հարությունի Այդինյանը 05.04.2014թ. ժամը 01.25-ին ձերբակալվել և տեղափոխվել է ոստիկանության Իջևանի բաժնի ՁՊՎ: Ա.Այդինյանը բանավոր հայտարարել է, որ մարմնական վնասվածքներ չունի, որի վերաբերյալ գրանցում է կատարվել <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում, որտեղ Ա.Այդինյանն իր ստորագրությամբ հաստատել է գանգատներ և մարմնական վնասվածքներ չունենալու հանգամանքը: 08.04.2014թ. Ա.Այդինյանը տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿՀ, որտեղ մարմնի արտաքին զննության ժամանակ նրա ձախ

արմնկահոդի շրջանում, ձախ ծնկահոդի և ոտքի սրունքի 1/3-ական հատվածներում հայտնաբերվել են քերծվածքներ, որոնց վերաբերյալ Ա.Այդինյանը հայտնել է, որ ստացել է տանը մարզվելու ժամանակ:

Ոստիկանության Իջևանի բաժնի հերթապահ մասի պետը և ՁՊՎ ոստիկանը իրենց ծառայողական պարտականությունների կատարման մեջ թերանալու՝ պատշաճ կերպով ձերբակալվածի մարմնի արտաքին զննությունը չկատարելու և մարմնական վնասվածքները չհայտնաբերելու համար խիստ նախազգուշացվել են:

Հարկ է նշել, որ մարմնի արտաքին զննություն կատարելու ժամանակ ոչ բոլոր դեպքերում են ՁՊՎ ընդունվող անձինք համաձայնվում հանել իրենց հագուստը, իսկ նրանց վրա ներգործելու որևէ հարկադրանքի միջոց նախատեսված չէ: Հետևապես նման դեպքերում հնարավոր չի լինում ամբողջապես զննել անձի մարմինը և ի հայտ բերել առկա մարմնական վնասվածքները:

Չեն բացառվում նաև այնպիսի դեպքերը, որ ՁՊՎ-ում անձի մոտ առաջացել է մաշկի թեթև գրգռում, որը հետագայում ՔԿՀ տեղափոխվելուց հետո խորացել է և ՔԿՀ-ում այն արձանագրվել է որպես մարմնական վնասվածք:

Արգելանքի տակ պահելու առավելագույն 72 ժամվա խախտման վերաբերյալ.

Գ.Աբրահամյանը ոստիկանության Հրազդանի բաժին բերման է ենթարկվել 18.03.2014թ. ժամը 12.40-ին: Նույն օրը ժամը 15.00-ին վերջինս ազատ է արձակվել, իսկ նախապատրաստված նյութերն ուղարկվել են Կոտայքի մարզի քննչական բաժին: Հետագայում Գ.Աբրահամյանը կրկին հրավիրվել է ոստիկանության Հրազդանի բաժին և ներկայացվել Կոտայքի մարզի քննչական բաժին, որտեղ 18.03.2014թ. ժամը 22.40-ին ձերբակալվել է և տեղափոխվել ՁՊՎ:

Ոստիկանության Հրազդանի բաժնի ավագ տեսուչ-հերթապահ, ոստիկանության մայոր Տ.Սիմոնյանը <<Ոստիկանության մարմին բերման ենթարկվածների հաշվառման>> գրքում սխալմամբ նշել է, որ Գ.Աբրահամյանը 18.03.2014թ. ժամը 15.00-ին տեղափոխվել է քննչական բաժին, այնինչ քննչական բաժին ուղարկվել են նախապատրաստված նյութերը, իսկ Գ.Աբրահամյանը նույն այդ ժամին ազատ է արձակվել: 21.03.2014թ. ժամը 15.30-ին Գ.Աբրահամյանը տեղափոխվել է դատարան, այնուհետև ՔԿՀ:

Ինչ վերաբերվում է քննիչի կողմից խախտումներով կազմված տեղեկանքին, ապա այդ հարցի մեկնաբանությունը կարող էք ստանալ ՀՀ քննչական կոմիտեից:

Միաժամանակ հայտնվում է, որ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում ՀՀ կառավարության 03.08.2006թ. թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված քրեակատարողական ծառայության <<Կալանավորվածներին պահելու վայրի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգ>>-ի 5-րդ կետի պահանջը խախտելու և որոշ դեպքերում ժամը 20.00-ից հետո կալանավորվածներին ՔԿՀ ընդունելու հարցը զուտ ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչությանը վերաբերվող գործընթաց է և որոշումները այնտեղ ընդունվում են նշված գերատեսչության ղեկավարության կողմից: Հետևապես, ՔԿՀ-ներում իրականացվող ծառայությանը միջամտելը դուրս է ՀՀ ոստիկանության իրավասությունից:

Դիտորդների խմբի կողմից նշված և Հայաստանի Հելսինկյան ՀԿ-ին տվյալները փոխանցված թվով 7 անձանց վերաբերյալ ՀՀ ոստիկանության կողմից 2014թ. ընթացիկ հաշվետվություններին տրվել են հիմնավոր և սպառիչ պատասխաններ:

2. Գլուխ

Անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, պատժի և խոշտանգման դեպքերը

<< Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, ձերբակալված անձն իրավունք ունի առողջության պահպանման, անհետաձգելի բժշկական օգնության, ինչպես նաև զննվել իր ընտրած բժշկի կողմից:

ՁՊՎ-ներում 2014թ. ընթացքում պահված 3485 անձանցից բուժզննությամբ հայտնաբերված մարմնական վնասվածքների վերաբերյալ քննչական մարմիններ են ուղարկվել 430 իրազեկումներ (12,3%): Յուրաքանչյուր իրազեկումով վարույթն իրականացնող մարմինների կողմից

նախապատրաստվում են նյութեր, որոնց ընթացքում իրականացվում է համապատասխան պատշաճ քննություն մարմնական վնասվածքների ստացման պատճառները և եղանակները պարզելու ուղղությամբ: Դիտորդների խմբի կողմից 2014թ. տարեկան հաշվետվությունում նշված այն հանգամանքը, որ ոստիկանության մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների ՁՊՎ-ների վարչակազմերը ենթարկվում են տվյալ բաժնի ղեկավարությանը, որն էլ պատճառ է հանդիսանում ոչ բոլոր մարմնական վնասվածքները գրանցելու համար, ապա դա անհիմն մեկնաբանություն է, քանի որ ՁՊՎ-ները ներառվել են բաժինների հերթապահ մասերի կազմում, ինչի արդյունքում ՁՊՎ-ների աշխատանքների հսկողությունը դրվել է մարզային վարչությունների շտաբների վրա և ավելի լայն շրջանակով մշտապես պահվում է ուշադրության կենտրոնում, որը ցույց է տվել իր արդյունավետությունը: Իսկ ՁՊՎ-ներ ընդունված ձերբակալվածների և նրանց մոտ արձանագրված մարմնական վնասվածքների քանակը տոկոսային հարաբերությամբ տարբեր մարզերում կարող են լինել տարբեր, ինչն իրենից որևէ խնդիր չի ներկայացնում:

Ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ ոստիկանության Տարոնի և Ախուրյանի բաժինների ՁՊՎ-ների համապատասխան գրանցամատյաններում մարմնական վնասվածքների վերաբերյալ գրանցումներ չեն կատարվել, ապա այդ կապակցությամբ կատարվել են ծառայողական քննություններ և իրենց գործառույթներում թերացած ոստիկանության ծառայողները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության: Հավելենք նաև, որ ոստիկանության ծառայողները որևէ կաշկանդվածություն և շահագրգռվածություն, առավել ևս իրենց ապահովագրելու խնդիր չունեն, քանի որ վարույթն իրականացնող մարմիններին իրազեկումներ տալով արդեն իսկ խնդիրը բարձրաձայնվում է: Այն մի քանի դեպքերը, որ գրանցամատյանում վնասվածքները չեն գրանցվել, ապա այն միտումնավոր բնույթ չի կրում, այլ անփույթության արդյունք է, ինչի համար ինչպես արդեն նշվեց, ոստիկանության ծառայողները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

Հարկ է նշել, որ ոստիկանության կողմից տրված և ՀՀ քննչական կոմիտեում ստացված մարմնական վնասվածքների վերաբերյալ իրազեկումների թվերի տարբերությունը հավանաբար պայմանավորված է տեղերում դրանց հաշվարկները ոչ ճիշտ կատարելու հանգամանքով:

ՀՀ ոստիկանությունը դիտորդների խմբի ընթացիկ հաշվետվություններին բազմիցս տվել է մեկնաբանություններ, որ ՁՊՎ-ներ ընդունված անձինք մարմնական վնասվածքները ստացած են լինում մինչև ՁՊՎ ընդունվելը կամ ՁՊՎ-ում ինքնավնասում կատարելու հետևանքով, հավելելով, որ ՁՊՎ-ներում ձերբակալված անձանց խոշտանգումների դեպքեր չեն արձանագրվել անկախ այն հանգամանքից, որ դիտորդների խումբը համակարծիք չէ: Եվ քանի որ մարմնական վնասվածքներով ՁՊՎ-ներ ընդունված կամ ՁՊՎ-ներում գտնվելու ընթացքում ինքնավնասումների հետևանքով մարմնական վնասվածքներ ստացած անձանց վերաբերյալ դիտորդների խմբի ընթացիկ հաշվետվություններին տրվել է հիմնավոր և սպառիչ պատասխաններ, այդ իսկ պատճառով էլ տարեկան հաշվետվությունում նշված նույն անձանց վերաբերյալ անդրադարձ չի կատարվում:

ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ կոպիտ, անհարգալից վերաբերմունք դրսևորելու, առավել ևս խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին ցանկացած դիմում-բողոք ՀՀ ոստիկանությունում դառնում է լայն քննարկման առարկա, մեղավոր անձինք ենթարկվում են խիստ կարգապահական պատասխանատվության:

3. Գլուխ

ՁՊՎ-ներում պահված անձանց մասին տեղեկություններ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի համաձայն ձերբակալումն անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելն է, հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար: Նույն օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ձերբակալվածը, վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա, ենթակա է ազատման, եթե.

1) չի հաստատվել անձի կողմից քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու մասին կասկածը,

2) բացակայում է անձին արգելանքի տակ պահելու անհրաժեշտությունը,

3) լրացել է ձերբակալման՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը և դատարանը մեղադրյալին կալանավորելու մասին որոշում չի կայացրել:

Հաշվի առնելով վերը նշված օրենսգրքի դրույթները, կարելի է հստակ ասել, որ վարույթն իրականացնող մարմնի կամ հետաքննության մարմինների կողմից անձանց ձերբակալումը կատարվում է ոչ թե անձանց պատժի ենթարկելու, այլ կատարված հանցագործությունները բացահայտելու և կատարողներին օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու համար: Բացի այդ, դիտորդների խմբի ուշադրությանն ենք ներկայացնում այն հանգամանքը, որ ձերբակալվածների գերակշիռ մասը կազմում են ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի (Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելը) հատկանիշներով հետախուզման մեջ գտնվող անձինք, որոնք հայտնաբերվելուց հետո ձերբակալվում են և դատարանը որպես կանոն նրանց ազատ է արձակում արգելանքից՝ պարտավորեցնելով ներկայանալ տարածքային զինկոմիսարյատ ծառայության անցնելու նպատակով:

Ինչ վերաբերվում է ոստիկանության բաժիններ բերման ենթարկվածների մեծ մասին ազատ արձակելուն, ապա այն զուտ բաժինների ծառայությանը վերաբերվող գործառույթ է և ամենևին էլ պարտադիր չէ բոլոր բերման ենթարկվածներին ձերբակալել: Նշենք, որ անձինք ոստիկանության բաժին բերման են ենթարկվում կամ բերվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 258-րդ հոդվածների համաձայն: Օրինակ, վարչական տույժի ենթարկելու մասին արձանագրություն կազմելու, անձի ինքնությունը պարզելու և բազում նմանատիպ գործողություններ իրականացնելու համար բերված անձինք բնականաբար ազատ են արձակվում: Եթե բերման ենթարկվածին ձերբակալելու հիմքեր չեն լինում, ապա վերը նշված գործողությունները ոստիկանության ծառայողները կատարում են օրենքով սահմանված՝ 3 ժամվա ընթացքում ու անձինք ազատ են արձակվում: Այնպես որ դիտորդների խմբի մտահոգությունը, որ բերման ենթարկված անձանց մեծ մասը ազատ են արձակվում տեղին չէ, քանի որ բերման ենթարկված անձը 3 ժամից ավելին չի պահվում ոստիկանության բաժինների սենյակներում, ինչպես նշվել է դիտորդների կողմից:

ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների հերթապահ մասերի և Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ներից ստացված 2014թ. տարեկան հաշվետվության վերլուծության արդյունքում պարզվել է, որ ՁՊՎ-ներում պահվել են 3485 անձինք, որոնք առանց բարդույթների օգտվել են օրենքով իրենց վերապահված իրավունքներից: Պահված անձանցից տարվա կտրվածքով ստացվել են հանձնունքների ընդունման 3231 և տեսակցությունների տրամադրման 440 դիմումներ, որոնց սահմանված կարգով ընթաց է տրվել: 2014թ. ընթացքում պահվող անձանց կողմից ՁՊՎ-ների կենցաղային պայմանների, սանիտարահիգիենիկ վիճակի, սննդի տրամադրման և վարչակազմի գործողություններից դիմում-բողոքներ չեն ստացվել:

4. Գլուխ
ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում պահվող անձանց իրավունքների հետ կապված խախտումները:

Արգելանքի վերցնելու, ձերբակալելու և դրանից բխող իրավախախտումներ.

2014թ. ընթացքում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ որոշ դեպքերում, ինչպես նշվել է դիտորդների խմբի կողմից անձին ոստիկանության բաժին բերման ենթարկելիս և ձերբակալելիս, ինչպես բերման ենթարկելու, այնպես էլ անձնական խուզարկության ենթարկելու ու ձերբակալելու մասին արձանագրություններում նշված ժամերը համընկնում են կամ նշված արձանագրությունները կազմվում են թերություններով:

Այս առումով ՀՀ ոստիկանության շտաբի կողմից համապատասխան հանձնարարականներ են տրվել ոստիկանության մարզային վարչությունների պետերին, համապատասխան ծառայողների միջոցով կատարվել են ստուգումներ կամ ծառայողական քննություններ նշված թերությունները վեր հանելու և

վերացնելու ողղությամբ, իսկ ծառայողական պարտականությունների մեջ թերացած ծառայողները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՁՊՎ-ի վարչակազմի կողմից կատարվող խախտումները.

ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ների վարչակազմի կողմից ձերբակալվածների անձնական գործերը թերի և խախտումներով կազմելու, ՁՊՎ-ի գրանցամատյանները խախտումներով և ջնջումներով լրացնելու, հարազատներին հեռախոսազանգի միջոցով իրազեկումը ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ, հայտնում ենք, որ դրանք վերացնելու նպատակով ՀՀ ոստիկանության շտաբի կողմից ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների ղեկավարներին համապատասխան հանձնարարականներ են տրվել խստորեն առաջնորդվել <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի պահանջներով, ինչպես նաև ոստիկանության վերադաս ծառայությունների կողմից պարբերաբար ուսումնասիրվում է ՁՊՎ-ների գործունեությունը և վարչակազմերին ցուցաբերվում գործնական-մեթոդական օգնություն՝ վերջիններիս մասնագիտական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով: ՁՊՎ-ներում պահվող անձանց հարազատներին հեռախասազրույցի միջոցով իրազեկելու վերաբերյալ դեռևս 26.04.2013թ. հանձնարարական է տրվել ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների ղեկավարներին՝ խստորեն առաջնորդվել իրավական ակտերի պահանջներով և անձին ՁՊՎ ընդունելիս կամ այլ հիմնարկ տեղափոխելիս անհապաղ կապի հնարավոր միջոցով տեղյակ պահել ձերբակալվածի կամ կալանավորվածի ընտրած անձին ու այդ մասին կազմել տեղեկանք, այն վավերացնելով ՁՊՎ ծառայողի և պահվող անձի ստորագրությամբ, որը դրվում է անձնական գործի մեջ:

Նշված գործառույթները չկատարելու կամ ոչ լիարժեք կատարելու համար կատարվել են ծառայողական քննություններ և թերացած ծառայողները խիստ նախազգուշացվել կամ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

5. Գլուխ
Բուժզննության և բուժօգնության հետ կապված խախտումների վերլուծություն

ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումներում անձանց ՁՊՎ ընդունելիս ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 13-րդ կետի պահանջների համաձայն, **արտաքին զննությունը** կատարվում է հերթապահ մասի պետի կամ ՁՊՎ ոստիկանի կողմից, իսկ ակնհայտ հիվանդության, գանգատներ լինելու կամ մարմնական վնասվածքներ հայտնաբերելու դեպքում հրավիրվում են շտապ օգնության բուժաշխատողներ, որոնց կողմից իրականացվում է համապատասխան բուժօգնություն և արդյունքների մասին գրառումներ են կատարվում ձև 12 գրանցամատյանում:

Երևան քաղաքի ՁՊՎ-ում նշված գործառույթն իրականացվում է ՁՊՎ-ի կրտսեր տեսուչ բուժակների կողմից, ովքեր ունեն համապատասխան բժշկական կրթություն և արտոնագիր:

Մարմնական վնասվածքներ հայտնաբերելու, ակնհայտ հիվանդության և գանգատներ լինելու դեպքում բոլոր ՁՊՎ-ներում հրավիրվում են շտապ օգնության բժիշկ-մասնագետներ: Երբ հրավիրված բժշկի կողմից նշվում է, որ համապատասխան հետազոտություն անցնելու անհրաժեշտություն կա բուժհաստատությունում, ապա այդ պահանջը կատարվում է, եթե ձերբակալված կամ կալանավորված անձը բուժզննություն անցնելուց անմիջապես հետո ՁՊՎ-ից չի տեղափոխվում:

ՁՊՎ վարչակազմերին հրահանգավորվել է, որ հետևողական լինեն, որպեսզի հրավիրված շտապ օգնության բուժաշխատողները ձև 12 գրանցամատյանում բուժօգնության վերաբերյալ գրառումները կատարեն հայերեն լեզվով, ինչպես նաև մշտապես ուշադրության կենտրոնում պահեն բուժսենյակների սանիտարահիգիենիկ վիճակի ապահովման ու դեղարկղում պահվող դեղորայքի ժամկետների նկատմամբ:

Հարկ է նշել նաև, որ ՁՊՎ ընդունվող անձանց մոտ ակնհայտ հիվանդության նշաններ կամ գանգատներ չլինելու դեպքում ձև 12 գրանցամատյանում համապատասխան գրառումները կատարվում են ՁՊՎ վարչակազմի կողմից, որը վավերացվում է ՁՊՎ ընդունվող անձի կողմից:

Ինչ վերաբերվում է բուժսենյակները այլ սենյակների հետ համատեղված լինելուն, ապա ինչպես բազմաթիվ անգամ նշվել է, այն կապված է շենքային պայմանների հետ և այդ հանգամանքը խոչընդոտ չի հանդիսանում բուժզննություն կամ բուժօգնություն իրականացնելու գործընթացին:

Անդրադառնալով նշված ոլորտին նշենք նաև, որ դիտորդների խմբի կողմից 2014թ. օգոստոս ամսին ոստիկանության Ախուրյանի բաժնի ՁՊՎ կատարած այցելության ժամանակ արձանագրվել է, որ նշված բաժնի ՁՊՎ ընդունվող անձանց բուժօգնություն ցուցաբերելու համար շտապ օգնության կայանի կողմից չեն իրականացվում կանչերը: Փաստի առթիվ ՀՀ ոստիկանության շտաբի կողմից գրություն է հասցեագրվել ոստիկանության Շիրակի մարզային վարչություն, որտեղից էլ Շիրակի մարզպետարան: Շիրակի մարզպետարանի կողմից հարցին տրվել է դրական լուծում և <<Ախուրյանի բժշկական կենտրոն>> ու <<Գյումրու շտապ բուժական օգնության կայան>> փակ բաժնետիրական ընկերությունների կողմից իրականացվում են ոստիկանության Ախուրյանի ՁՊՎ-ի շտապ օգնության կանչերը:

ՀՀ ոստիկանության շտաբի նախաձեռնությամբ 2014թ-ին ՀՀ ոստիկանության բժշկական վարչության կողմից ոստիկանության մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների հերթապահ մասերի պետերի հետ անցկացվել են սեմինար պարապմունքներ, որոնց ընթացքում ուսումնասիրվել են առաջին բուժօգնության, մարմնի արտաքին զննության, ախտահանիչ նյութերի օգտագործման ձևերն ու մեթոդները և մի շարք այլ հարցեր:

6. Գլուխ
Ձերբակալվածների պահման պայմանների մասին վերլուծություն

ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ենթակա բաժինների հերթապահ մասերի և Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ների գործունեությունը 2012թ. նոյեմբերի 25-ից ղեկավարվում է ՀՀ ոստիկանության շտաբի կողմից: 2014թ. ՁՊՎ-ների գործունեությունում գրանցվել է առաջընթաց կապված անձանց ընդունելու և պահելու, նյութակենցաղային ապահովման, սննդի, բուժսպասարկման և ձերբակալման ընթացքում նախատեսված այլ իրավունքների ապահովման հետ: Մի շարք ՁՊՎ-ներում կատարվել են մասնակի վերանորոգման, շինարարական և տեխնիկապես վերազինման աշխատանքներ: Մասնավորապես. Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ի մի քանի խցերում կատարվել են վերանորոգման աշխատանքներ, կառուցվել և շահագործման է հանձնվել հանձնուքների ընդունման առանձին սենյակ, որը կահավորված է ներքին կանոնակարգի 9-րդ գլխի պահանջների համապատասխան: Ամբողջությամբ փոխվել են ՁՊՎ-ի 1-ին և 2-րդ հարկերի սանհանգույցի ջրահեռացման համակարգերը, 1-ին և 2-րդ հարկերի միջանցքներում տեղադրվել են տեսախցիկներ:

Դիտորդների խմբի կողմից ներկայացված առաջարկության հիման վրա ոստիկանության Սիսիանի բաժնի ՁՊՎ-ի խցերի պատուհանները ձևափոխվել են և ներկայումս ամբողջությամբ բացվում են: Մասիսի բաժնի ՁՊՎ-ի խոնավության մակարդակը բարձր լինելու պատճառով ՀՀ ոստիկանության պետի 07.03.2014թ. թիվ 666-Ա հրամանով ժամանակավորապես դադարեցվել է ՁՊՎ-ի գործունեությունը մինչև շինարարական աշխատանքների ավարտը: Ներկայումս շինարարական աշխատանքները շարունակվում են: Վերանորոգվել է ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի ՁՊՎ-ի տեսակցության սենյակը և այն ներկայումս համապատասխանում է ընդունված չափանիշներին:

Ինչ վերաբերվում է ՁՊՎ-ների ոչ բավարար սանիտարահիգիենիկ վիճակին, խցերում ջրի ծորակների չգործելուն, սպիտակեղենի կեղտոտ լինելուն, հիգիենիկ թղթի բացակայությանը, խոնավությանը, սենյակների փոշոտ լինելուն և ջրի ծորակների չգործելուն, ապա նշված թերությունները շարունակական բնույթ չէն կրում և տեղում վերացվում են, իսկ այդպիսիք արձանագրվելուց հետո համապատասխան ծառայողները ենթարկվում են կարգապահական պատասխանատվության:

ՁՊՎ-ների լոգարաններում տաք ջուր ապահովելու համար տեղադրվում են էլեկտրական տաքացուցիչներ, իսկ այն ՁՊՎ-ներում, որտեղ հաճախակի ընդհատվում է ջրամատակարարումը տեղադրվում են նաև ջրի բաք և մղիչ պոմպեր՝ մշտական ջուր ապահովելու համար:

ՁՊՎ-ների խցերում, որտեղ բնական լուսաթափանցելիությունը թույլ է, տեղադրվում են հզոր էլեկտրական լամպեր, որոնց միջոցով ապահովվում է արհեստական բավարար լուսավորությունը:

ՁՊՎ-ներում պահվող անձանց սննդով ապահովելու հիմնահարցերը.

ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 15-ի թիվ 587-Ն որոշմամբ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու նպատակով, վերլուծության են ենթարկվել ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ենթակայության տակ գտնվող ՁՊՎ-ներ փաստացի առաքվող սննդամթերքների՝ ըստ տեսականու, շուկայական միավոր գների հաշվարկները, կազմվել է տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց, որոնք ուղարկվել են ՀՀ ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչություն, այն քննարկելու ու ՁՊՎ-ներում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու համար նախատեսված գումարի չափը բարձրացնելու նպատակով: Արդյունքում ոստիկանության համակարգում գործող ՁՊՎ-ներում պահվող յուրաքանչյուր անձին հասանելիք մեկ օրվա անվճար սննդի ձեռք բերման համար գումարի չափը բարձրացվել է, այն դարձնելով 830 դրամ (նախկին 690 դրամից), իսկ հղի կանանց, կերակրող մայրերին, անչափահասներին և հիվանդներին՝ 980 դրամ (նախկին 790 դրամից): Նշված ավելացումները ներառվել են ՀՀ ոստիկանության 2015թ. բյուջեում և կիրառվում են հունվարի 1-ից:

Հարկ է նշել, որ ՁՊՎ-ներում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու գումարի ավելացման հարցը բազմաթիվ անգամ բարձրացվել է նաև դիտորդների խմբի կողմից, ինչը նույնպես իր կարևոր նշանակությունն է ունեցել այդ հարցին դրական լուծում տալու համար, իսկ խմբի կողմից արված առաջարկները մշտապես գտնվում են ոստիկանության ուշադրության կենտրոնում և միջոցներ են ձեռնարկվում դրանք կյանքի կոչելու համար:

7. Գլուխ
ՀՀ ոստիկանության շտաբի հերթապահ ծառայության վարչության հերթապահ մասի, հերթապահ մասերի գործունեության ղեկավարման բաժանմունքի կողմից 2014թ. ընթացքում կատարված աշխատանքների մասին

Ոստիկանության մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների և Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ներից ստացված 2014թ-ի գործունեության վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա կազմվել են եռամսյակային, կիսամյակային, 9 ամիսների և տարեկան կատարված աշխատանքների վերաբերյալ համապատասխան տեղեկանքներ, որոնք ենթարկվել են վերլուծության: Առաջին եռամսյակում կատարված աշխատանքների վերլուծության արդյունքներով Երևան քաղաքի ու Շիրակի մարզային վարչությունների պետերին առաջարկվել է ՁՊՎ-ների գործունեության արդյունավետությունն ու անձնակազմի մասնագիտական պատրաստվածությունը բարձրացնելու նպատակով ավելացնել ՁՊՎ-ների ստուգումների հաճախականությունը և անձնակազմերին պարբերաբար ցուցաբերել գործնական-մեթոդական օգնություն, ինչը չէր կատարվել առաջին եռամսյակում, իսկ երկրորդ եռամսյակում՝ Տավուշի, Արարատի և Լոռու մարզային վարչությունների պետերին առաջարկվել է ՁՊՎ-ներում պահվող անձանց հարազատներին հնարավորության սահմաններում իրազեկել օրենսդրությամբ իրենց վերապահված տեսակցության իրավունքի մասին, քանի որ դրանց թիվն ըստ հաշվետվությունների առաջին եռամսյակում բավականին սակավ է եղել:

Դիտորդների խմբի առաջարկով ՀՀ ոստիկանությունում կատարվել են վերլուծություններ և պարզվել է, որ Արմավիրի մարզային վարչության Արմավիրի և Վաղարշապատի բաժինների ՁՊՎ-ները աշխատում են ծանրաբեռնված և ՀՀ ոստիկանության համակարգում գործող ՁՊՎ-ներում պահված անձանց ծանրաբեռնվածության աստիճանով զբաղեցնում են 2-րդ տեղը: Հաշվի առնելով վերը նշվածը ոստիկանության Արմավիրի և Վաղարշապատի բաժինների ՁՊՎ-ների ծանրաբեռնվածության հարցը բաժանմունքի կողմից ներկայացվել է ՀՀ ոստիկանության շտաբի ղեկավարությանը և արդյունքում ՀՀ ոստիկանության պետի 16.01.2014թ. թիվ 106-Ա հրամանով նշված բաժինների ՁՊՎ-ների ոստիկանների հաստիքները ավելացվել են ևս 4-ականով, իսկ Տարոնի բաժնի ՁՊՎ-ում թերբեռնվածության պատճառով՝ ՁՊՎ ոստիկանի 8 հաստիքներից 4-ը կրճատվել է:

Վերլուծության են ենթարկվել նաև ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ենթակայության տակ գտնվող ՃՊՎ-ներ փաստացի առաքվող սննդամթերքի՝ ըստ տեսականու, շուկայական միավոր գների հաշվարկները, կազմվել է տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց, որոնք ուղարկվել են ՀՀ ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչություն, այն քննարկելու ու ՃՊՎ-ներում պահվող անձանց անվճար սննդով ապահովվելու համար նախատեսված գումարի չափը բարձրացնելու նպատակով: Արդյունքում գումարի չափը բարձրացվել է:

ՃՊՎ-ների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ կատարված աշխատանքներ.

Բաժանմունքի կողմից հերթապահ մասերի ու ՃՊՎ-ների գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերից կազմվել է հարց-պատասխան մեթոդական ձեռնարկ և ՀՀ ոստիկանությունում կազմակերպված սեմինար պարապմունքների ժամանակ տրամադրվել է հերթապահ մասերի պետերին և Երևան քաղաքի վարչության ՃՊՎ վարչակազմին՝ այն ուսումնասիրելու և տեղերում համապատասխան ծառայողներից ստուգարքներ ընդունելու համար:

ՃՊՎ-ներում գործունեության արդյունավետության և վարչակազմերի մասնագիտական պատրաստակամության մակարդակի բարձրացման նպատակով բաժանմունքի նախաձեռնությամբ և մասնակցությամբ 2014թ. հունիսի 3-ից 24-ը ՀՀ ոստիկանության բժշկական վարչության հակահամաճարակային հսկողության կենտրոնի բուժծառայողների կողմից ոստիկանության մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների հերթապահ մասերի պետերի և Երևան քաղաքի վարչության ՃՊՎ-ի պատասխանատուների հետ անցկացվել են սեմինար պարապմունքներ, որոնց ընթացքում ուսումնասիրվել են առաջին բուժօգնության, մարմնի արտաքին զննության, ախտահանիչ նյութերի օգտագործման ձևերը ու մեթոդները, ինչպես նաև ՃՊՎ-ներում պահվող անձանց տրամադրվող անվճար սննդի տրամադրման, տեղափոխման, պահման մեթոդները և մի շարք այլ հիմնահարցեր:

ՀՀ Կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 124-րդ կետի պահանջի կատարման համար բաժանմունքի առաջարկով և հետևողականության արդյունքում ՀՀ ոստիկանության համակարգում գործող բոլոր ՃՊՎ-ների միջանցքներում տեղադրվել են տեսախցիկներ:

Բաժանմունքի նախաձեռնությամբ Երևան քաղաքի և մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների պետերի հետ կազմակերպվել է սեմինար-խորհրդակցություն, որի ժամանակ քննարկվել են հերթապահ մասերի և ձերբակալվածներին պահելու վայրերին վերաբերվող մի շարք հիմնահարցեր:

Բաժանմունքի ղեկավարությունը 15.12.2014թ. մասնակցել է <<Մեդիա կենտրոն>>-ում տեղի ունեցած <<Մարդու իրավունքները ՀՀ փակ հիմնարկներում>> վերնագրով քննարկմանը, իսկ 22.12.2014թ.՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբերի կողմից կազմակերպված շնորհանդես-քննարկմանը:

Ինչպես արդեն վերը նշվել է՝ Մասիսի բաժնի ՃՊՎ-ի խոնավության մակարդակը բարձր լինելու պատճառով ՀՀ ոստիկանության պետի 07.03.2014թ. թիվ 666-Ա հրամանով ժամանակավորապես դադարեցվել է ՃՊՎ-ի գործունեությունը մինչև շինարարական աշխատանքների ավարտը: Ներկայումս շինարարական աշխատանքները շարունակվում են:

Բաժանմունքի կողմից 3 անգամ ստուգման է ենթարկվել ոստիկանության Մուշի բաժնում նոր կառուցվող ՃՊՎ-ի շինարարական աշխատանքների ընթացքը և ներկայացվել անհրաժեշտ առաջարկություններ այն ՀՀ Կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի պահանջներին համապատասխան կառուցելու համար: Բացի այդ, գրությունով առաջարկվել է դիտորդների խմբին մինչև շահագործման հանձնելը այցելել Մուշի բաժնի ՃՊՎ, ուսումնասիրություններ կատարել և ներկայացնել առաջարկություններ շինարարական թերությունների վերաբերյալ: Խմբի կողմից ներկայացված մի շարք առաջարկություններ փոխանցվել են Մուշի բաժնի ղեկավարությանը շինարարական աշխատանքների կատարման ժամանակ դրանք հաշվի առնելու համար:

8. Գլուխ
Դիտորդական խմբի գործունեության կարգը հաստատելու մասին ՀՀ ոստիկանության պետի թիվ 1-Ն հրամանում կատարված փոփոխությունների, խնդիրների վերլուծություն

ՀՀ ոստիկանության պետի 14.01.2005թ. թիվ 1-Ն հրամանում կատարված փոփոխությունների և կոնկրետ ձևակերպումների վերաբերյալ հայտնվում է, որ դրանք կատարվել են դիտորդների խմբի հետ կազմակերպված համատեղ քննարկումների արդյունքում ձեռք բերված համաձայնությունների շրջանակներում:

ՀՀ ոստիկանությունը համակարծիք չէ դիտորդների խմբի այն մտահոգությանը, որ թիվ 1-Ն հրամանում կատարված փոփոխությունները խոչընդոտ են հանդիսանում խմբի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելուն, քանի որ դիտորդների մուտքը ՁՊՎ-ներ սահմանվում է նշված հրամանի 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերով և դրանք փոփոխության չեն ենթարկվել: Ինչ վերաբերվում է դիտորդների խմբի ՁՊՎ-ներ մուտք գործելու պարագայում ոստիկանության կաշկանդվածությանը, ապա դա ամենևին էլ այդպես չէ: Ավելին, ոստիկանության կողմից միշտ խրախուսվել է դիտորդների ՁՊՎ-ներ կատարած այցելությունները, քանի որ դրանց ընթացքում վեր են հանվում տեղ գտած թերությունները:

9. Գլուխ
Ընթացիկ հաշվետվությունների վերլուծություն

ՀՀ ոստիկանության շտաբում 2014թ. ընթացքում ստացվել են դիտորդների խմբի կողմից ներկայացված 2013թ-ի տարեկան 1 և 43 ընթացիկ հաշվետվություններ, ինչպես նաև ՁՊՎ-ների գործունեությանը վերաբերվող 15 գրություններ, որոնք քննարկվել են ՀՀ ոստիկանության շտաբում, ինչպես նաև Երևան քաղաքի ու մարզային վարչություններում և տրվել են հանգամանալից մեկնաբանություններ: Ընթացիկ հաշվետվություններում արծարծված խախտումներն ու թերությունները բացառելու նպատակով հանձնարարականներ են տրվել ոստիկանության Երևան քաղաքի, Տավուշի, Սյունիքի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզային վարչություններին:

Պրակտիկան ցույց է տվել, որ դիտորդների խմբի կողմից ՁՊՎ-ներ կատարած այցելությունները նպաստում են ի հայտ բերել տեղ գտած թերությունները և խախտումները, որոնք ընթացիկ (**այլ ոչ հրատապ**) հաշվետվությունների միջոցով ներկայացվում են ՀՀ ոստիկանություն և դրանց տրվում են դրական լուծումներ: Ցավոք դիտորդների խումբը անհասկանալի պատճառով ոստիկանության կողմից տրված մեկնաբանությունները որակել է որպես ոչ բավարար պատասխաններ: Սակայն հարկ է նշել, որ ոստիկանության կողմից տրված մեկնաբանությունները հիմնված են կատարված ծառայողական քննությունների, ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքների վրա:

Ամեն դեպքում, ոստիկանությունը բարձր է գնահատում 2014թ. ընթացքում դիտորդների խմբի հետ աշխատանքը, որի արդյունքում համատեղ ջանքերով իրականացվել են մի շարք բարեփոխումներ թե ՁՊՎ-ների, այնպես էլ ոստիկանության բաժինների հերթապահ մասերի գործունեությունում:

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ